

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-12/24-I/ECOCENTER

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

29 հունվարի 2024թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Լիլիթ Վարուժանի Սահակյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված 171 598 924 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, Ծրագրի առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

### 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

#### 2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

#### 2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

### **3. Ծրագրի ֆինանսավորման չափը**

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 171 598 924 ՀՀ դրամ:

### **4. Մշտադիտարկում**

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

## 5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

## 6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

## 7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա


Կազմակերպություն


ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ

ք. Երևան, Մ. Բաղրամյան 24  
Հ/հ՝ 900011024115  
ՀՎՀՀ՝ 00005673  
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

ք.Երևան, Արուսյան 68  
Հ/հ՝ 900018005414  
ՀՎՀՀ՝ 01506627  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝  
  
(ստորագրություն)

Կազմակերպության տնօրեն՝  
  
(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ

Լիլիթ Վարուժանի Սահակյան

Կ. Տ.

Կ Տ



Ծրագրի գիտական ղեկավար



  
(ստորագրություն)

Սահակյան Լիլիթ Վարուժանի


**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ**

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Լիլիթ Վարուժանի Սահակյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 հունվարի 2024թ. N 1-12/24-I/ECOCENTER պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 171 598 924 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

**Ակադեմիա**

Նախագահ՝

  
(ստորագրություն)

**Կազմակերպություն**

տնօրեն՝

  
(ստորագրություն)  


**ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ**




**Լիլիթ Վարուժանի Սահակյան**


**ԱՎՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ**  
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ԱԳ (ազդեցության գործակից) ունեցող պարբերականներում հոդվածներ՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների՝	6
ԱԳ չունեցող, բայց Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ներառված պարբերականներում հոդվածներ՝	1
ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում հոդվածներ՝	5
Այլ պարբերականներում հոդվածներ/հոդված ժողովածուի մեջ՝	1
Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություններ, գրքեր, հոդվածներ՝	0
Գրքեր, մենագրություններ՝	0
Գիտաժողովի նյութեր՝	5
Արտոնագրեր՝	0

Կազմակերպության տնօրեն՝

  
(ստորագրություն) Լիլիթ Կարոտյանի Սահակյան

Կազմակերպության գիտքարտուղար՝

  
(ստորագրություն) Սարգսյան Քրիստինա  
Վլադենավի



Կ. Տ.


**ՆԱԽԱՀԱՇԻՎ**

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

«Ղ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	149 605 710	29 921 142	37 401 427	37 401 427	44 881 714
2.	տնտեսական ծախսեր՝	9 142 000	1 828 400	2 285 500	2 285 500	2 742 600
3.	այլ ծախսեր՝	12 851 214	2 570 242	3 212 803	3 212 803	3 855 366
Ընդամենը՝		171 598 924	34 319 784	42 899 730	42 899 730	51 479 680

Կազմակերպության տնօրեն՝

  
(ստորագրություն)

Լիլիթ Վարդանի Սահակյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

  
(ստորագրություն)

Տարուշ Վարդանի Իսահակյան

Կ. Տ.




**ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ**

«Ն դրամ»


Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	<b>Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝</b>	<b>9 142 000</b>
1.	էլեկտրաէներգիայի ծառայություն	4 800 000
2.	գազի ծառայություն	0
3.	ջրամատակարարման ծառայություն	140 000
4.	կապի ծառայություն	900 000
5.	աղբահանություն	60 000
6.	Հակահրդեհային ծառայություն	330 000
7.	Կայքի ստեղծում	950 000
8.	Համակարգչային ծառայություն	1 962 000
	<b>Այլ ծախսեր, այդ թվում՝</b>	<b>12 851 214</b>
1.	Գիտական միջոցառումներ	2 000 000
2.	Սարքեր և սարքավորումներ	1 201 214
3.	Վերանորոգում	1 800 000
4.	Ավտոմեքենայի ընթացիկ վերանորոգում և սպասարկում	900 000
5.	Վառելիք	700 000
6.	Գրենական պիտույքներ և տնտեսական ապրանքներ	1 060 000
7.	Գործուղում	1 800 000
8.	Գրասենյակային և լաբորատոր կահույք	990 000
9.	Լաբորատոր նյութեր	1 500 000
10.	Ներկայացուցչական	700 000
11.	Չնախատեսված ծախսեր	200 000

Կազմակերպության տնօրեն՝

  
(ստորագրություն)

Լիլիթ Վարդանյանի Սահակյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

  
(ստորագրություն)

Տարուշ Վարդանյանի Սահակյան





**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ**  
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)      D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)  
B - ամիսների քանակ      E - գումարային  
C - աշխատաժամանակի ուժիմ

«Ն դրամ»

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
<b>Վարչասպասարկող անձնակազմ</b>						
Սահակյան Լիլիթ Վարուժանի	Տնօրեն	520 000	12	հիմնական	40	6 240 000
Ասմարյան Շուշանիկ Գուրգենի	Գիտական գծով փոխտնօրեն	350 000	12	հիմնական	40	4 200 000
Գրիգորյան Եվա Գերմանի	Տնօրենի օգնական	75 000	12	համատեղություն	10	900 000
Գևորգյան Դիանա Անուշավանի	Ընդհանուր բաժնի վարիչ	160 000	12	հիմնական	40	1 920 000
Իսահակյան Տարուշ Վարդանի	Գլխավոր հաշվապահ	210 000	12	հիմնական	40	2 520 000
Մկրտչյան Մարինա Յուրիի	Կադրերի ավագ տեսուչ	160 000	12	հիմնական	40	1 920 000
Պողոսյան Գայանե Սուրենի	Ամբիոնի վարիչ	89 610	12	հիմնական	30	1 075 320
Բելլերյան Անահիտ Նորայրի	Ռեֆերենտ թարգմանիչ	103 000	12	հիմնական	40	1 236 000
Հայրապետյան Էլիզա Հմայակի	Քիմիանալիտիկ	96 620	12	հիմնական	40	1 159 440
Շահնազարյան Յանա Գերասիմի	Լաբորանտ	0	0	հիմնական	0	0
Գրիգորյան Մերի Մուրադի	Մեթոդիստ	52 000	12	հիմնական	20	624 000
Ամիրյան Ելենա Վարոսի	Մեթոդիստ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Ենգիբարյան Գեղամ Լևոնի	Տնտեսավար	140 000	12	հիմնական	40	1 680 000
Սահակյան Գևորգ Գուրգենի	Վարորդ	95 650	12	հիմնական	40	1 147 800
Երանոսյան Արեգնազ Պարույրի	Դռնապահ	95 650	12	հիմնական	40	1 147 800
Բելիխ Վալենտինա Ալեքսանդրի	Դռնապահ	95 650	12	հիմնական	40	1 147 800
Աղաբաբյան Տիգրան Վոլոդյայի	Ինժեներ-լեկտրիկ	73 000	12	համատեղություն	20	876 000
Մարդանյան Գայանե Հովհաննեսի	Հավաքարար	95 650	12	հիմնական	40	1 147 800
Մարտիրոսյան Ռոզա Հովհաննեսի	Հավաքարար	104 000	12	հիմնական	40	1 248 000
Գրիգորյան Թամար Լորիկի	Լաբորանտ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Գրիգորյան Գրիգոր Բաբկենի	Վարորդ	95 650	12	հիմնական	40	1 147 800
Գևորգյան Դիանա Անուշավանի	համակարգչային օպերատոր	31 500	12		0	378 000
Ամիրյան Ելենա Վարոսի	գրադարանավար	47 700	12		0	572 400
Մկրտչյան Մարինա Յուրիի	գնումները համակարգող	45 000	12		0	540 000
Գրիգորյան Գրիգոր Բաբկենի	Քաղ. պաշտպանության շտաբի պետ	67 700	12		0	812 400

Սարգսյան Քրիստինա Վլաչեսլավի	գիտական քարտուղար	300 000	12	հիմնական	40	3 600 000
Սարգսյան Անուշ Ժորայի	լաբորանտ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Ասատրյան Անի Ջոհրաբ	խմբի ղեկավար	209 850	12	հիմնական	30	2 518 200
Մկրտչյան Մարինա Յուրիի	համակարգչային օպերատոր	31 500	12		0	378 000
Գևորգյան Դիանա Անուշավանի	գնումները համակարգող	40 000	12		0	480 000
Բաբայան Մերի Էրիկի	Գիտական արդյունքների լուսաբանման պատասխանատու	120 000	12	համատեղություն	40	1 440 000
<b>Գիտական անձնակազմ</b>						
<b>Բաժին Շրջակա միջավայրի երկրաքիմիայի</b>						
Տեփանոսյան Գևորգ Հովհաննեսի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Հովհաննիսյան Հասմիկ Ալբերտի	Գիտաշխատող	172 626	12	հիմնական	30	2 071 512
Գևորգյան Աստղիկ Տիգրանի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Բաղդասարյան Լուսինե Գառնիկի	Ավագ լաբորանտ	156 091	12	հիմնական	40	1 873 092
Պողոսյան Ժենյա Անդրիկ	Լաբորանտ	119 714	12	հիմնական	40	1 436 568
Ենոքյան Տաթևիկ Գագիկի	Լաբորանտ	119 714	12	հիմնական	40	1 436 568
Դավթյան Կարինե Արարատի	Լաբորանտ	119 714	12	հիմնական	40	1 436 568
Ղարիբյան Ինա Էդիկի	Լաբորանտ	59 857	12	համատեղություն	20	718 284
<b>Բաժին Ռադիոէկոլոգիայի</b>						
Բեյլակա Օլգա Ալեքսանդրի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Փյունսկյուլյան Կոնստանտին Իվանի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Մովսիսյան Նոնա Էդիկի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Հովհաննիսյան Սպարտակ Մարատի	Լաբորանտ	119 714	12	հիմնական	40	1 436 568
Գևորգյան Աննա Խոսրովի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
<b>Բաժին Կենսաէներգետիկայի և կերերի որակի</b>						
Մեծունց Բագրատ Խաչատուրի	Ղեկավար	224 876	12	հիմնական	20	2 698 512
Սարգսյան Տաթևիկ Աշոտի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Ալեքսանյան Վալերի Ալեքսանդր	Գիտաշխատող	115 084	12	հիմնական	20	1 381 008
<b>Բաժին Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի և հեռազննման</b>						
Ասմարյան Շուշանիկ Գուրգենի	Ղեկավար	224 876	12	հիմնական	20	2 698 512
Մեղվեղև Անդրեյ Ալեքսանդրի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Այվազյան Գրիգոր Միերի	Լաբորանտ	119 714	12	հիմնական	40	1 436 568
Ավետիսյան Անի Արմենի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
Հովսեփյան Ազատուհի Արծրունու	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Կուրդյաշև Թովմաս Ալեքսանդրի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
<b>Խումբ</b>						

Տվյալագիտության և մեքենայական ուսուցման						
Մուրադյան Վահագն Սոսի	Ղեկավար	174 941	12	համատեղություն	20	2 099 292
Խլղաթյան Անահիտ Նշանի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Ավետիսյան Ռինա Արմենի	Լաբորանտ	119 714	12	հիմնական	40	1 436 568
Կենտրոն Սննդային շղթաների ռիսկի գնահատման տեղեկատվության և վերլուծության						
Պիպոյան Դավիթ Աշոտի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Սիրեյան Լիանա Արայիկի	Լաբորանտ	119 714	12	հիմնական	40	1 436 568
Պողոսյան Էլեն Վաղարշակի	Լաբորանտ	52 000	12	հիմնական	20	624 000
Խաչատրյան Մոնիկա Վարդանի	Լաբորանտ	52 000	12	հիմնական	20	624 000
Զիռկովա Վիկտորիա Իգորի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
Սարգսյան Անյուտա Վալերի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Արշակյան Եսրափայա Հայկի	Լաբորանտ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Հարությունյան Բագրատ Միխայիլի	Գիտաշխատող	100 000	12	համատեղություն	10	1 200 000
Տարոն Կարեյան Կարենի	Լաբորանտ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Ավետ Զանվելյան Արմենի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
Կոստանյան Մանե Վարդանի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
Խումբ Պարենային անվտանգության և սննդանյութերի գնահատման						
Բեգլարյան Մելինե Ռադիկի	Ղեկավար	349 881	12	հիմնական	40	4 198 572
Հովհաննիսյան Աստղիկ Սերգեյի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Աբրահամյան Արմեն Սարգսի	Լաբորանտ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Խումբ Լաբորատոր խումբ						
Բաբայան Գայանե Հրանտի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝						27832446
Ընդհանուր գումար՝						149 605 710

Կազմակերպության տնօրեն՝

*[Ստորագրություն]*  
(ստորագրություն)

Լիլիթ Վարդանի Սահակյան

Կազմակերպության անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավար՝

*[Ստորագրություն]*  
(ստորագրություն)

*[Ստորագրություն]*



**ԱՌԱՋԱԴՐԱԼՔ**

«Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ» ծրագրի  
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Ծրագիրը նպատակաուղղված է իրականացնելու ՀՀ տարբեր տարածքների էկոլոգիական իրավիճակի համալիր գնահատում, էկոլոգիական, առողջական և սնման շղթայի ռիսկի գործոնների բացահայտում և գնահատում, էկոլոգիական փորձաքննության գիտամեթոդական հիմունքների մշակում՝ նորագույն նորարարական տեխնոլոգիաների և միջազգայնորեն ընդունված մեթոդների կիրառմամբ:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Ծրագրով նախատեսված հիմնարար և կիրառական բնույթի միջգիտակարգային հետազոտություններն ուղղված են ՀՀ տարբեր տարածքների էկոլոգիական իրավիճակի համալիր գնահատմանը, էկոլոգիական և առողջական ռիսկի գործոնների բացահայտմանն և գնահատմանը, էկոլոգիական փորձաքննության գիտամեթոդական հիմունքների մշակմանը, մարդու էկոլոգիային առնչվող խնդիրների լուծմանը, բնական ռեսուրսների կառավարման գործընթացների բարեփոխմանը, սննդի անվտանգությանն ու սննդային շղթայի ռիսկերի բացահայտմանը և գնահատմանը: Նշված հետազոտություններն հիմնականում առնչվում են ազգային անվտանգության հարցերին:

Ծրագրի հայեցակարգը ամբողջովին համապատասխանում է Շրջակա միջավայրի (ՇՄ) պահպանության ոլորտում հետազոտությունների զարգացման համաշխարհային միտումներին: Ծրագրում ներկայացված խնդիրներն իրենց արտացոլումն են գտել ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային կոնվենցիաներում և նախատեսվող հետազոտությունները կնպաստեն ստորև նշված կոնվենցիաներից բխող՝ հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների կատարմանը (անապատացման դեմ պայքարի, կենսաբանական բազմազանության, միջսահմանային կոնսերվատում ՇՄ-ի ազդեցության գնահատման և այլ կոնվենցիաներ): Երկրաբնապահպանական հիմնահարցերի արդիականությունը արտացոլված է ՀՀ ԳԱԱ Նախագահության մի շարք որոշումներում:

Ծրագրով նախատեսված հետազոտությունները միջգիտակարգային են (երկրաբանություն, աշխարհագրություն, կենսաբանություն, քիմիա, մաթեմատիկա և այլն), որոնք միավորում են երկու գիտական ուղղություններ՝ երկրաբնապահպանություն (գեոէկոլոգիա) և շրջակա միջավայրի գիտություններ: Հետազոտությունների հիմնական խնդիրն է՝ կիրառելի վերոնշյալ գիտական ուղղությունների գիտամեթոդական հիմքն ու մեթոդական մոտեցումները, հասկացական ապարատը, ստեղծել էկոլոգիական և շրջակա միջավայրային վտանգների կանխորոշման մեթոդաբանություն, մշակել տեխնածին գործընթացներից առաջացող վնասի նվազեցման տեխնոլոգիաներ և միջոցառումներ, ի հայտ բերել ռիսկային տարածքներ և խմբեր, վեր հանել քիմիական տարրերի պարունակությունների բնական հասարակչության խախտման պատճառներն ու գտնել նրանց կառավարման եղանակներ:

րը և կիրառել ստացված արդյունքները՝ հասարակության էկոլոգիական անվտանգությանն ուղղված գիտահեն որոշումների կայացման ընթացքում:

Հետազոտությունների փորձարարական և լաբորատոր մասը կապահովվի ISO պահանջներին բավարարող սարքավորումներով և մեթոդներով հագեցած քիմիական լաբորատորիան: Հետազոտությունների իրականացման համար կօգտագործվեն տիեզերական բազմասպեկտրալ տարբեր տարածական, սպեկտրալ, ժամանակային լուծաչափի լուսանկարներ, անօդաչու թռչող սարքեր՝ բազմասպեկտրալ, ջերմային նկարահանման խցիկներով, մեքենայական ուսուցման ալգորիթմներ՝ տեղեկատվական բազաների մշակման և մոդելավորման, ԱՏՀ ու հեռազննման տեխնոլոգիաներ թեմատիկ թվային քարտեզների մշակման նպատակով: Աշխատանքներն իրականացվելու են Էկոկենտրոնի հմուտ և բարձրորակ անձնակազմով, որոնց մի մասը մասնագիտական վերապատրաստում է անցել ՌԴ-ի, Գերմանիայի, Իտալիայի, Իսպանիայի, Շվեյցարիայի, Մեծ Բրիտանիայի, Լեհաստանի և այլ երկրների առաջատար գիտական կենտրոններում և տարբեր տեղական և միջազգային որակավորման դասընթացներում:

Հատկանշական են նաև Կենտրոնում նոր ձևավորված «Տվյալագիտության և մեքենայական ուսուցման» և «Պարենային անվտանգության և սննդանյութերի գնահատման» խմբերը, որոնցից առաջինն ապահովում է հետազոտությունների ընթացքում գեներացված մեծածավալ տվյալների մշակումը ժամանակակից ՄՈւ մեթոդներով, իսկ երկրորդ խումբն՝ ապահովում է սննդի սպառման և սննդանյութերի ընդունման գնահատման համար սննդակարգային հետազոտությունների իրականացումը: Նախատեսվում է ստեղծել նոր խումբ 2024թ.-ի ընթացքում:

Կենտրոնում գործում են «Բնապահպանություն և բնօգտագործում» մագիստրոսական և ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոնները, որոնցում պատրաստվում են անհրաժեշտ որակավորման երիտասարդ մասնագետները: Առկա է նաև հայ-ցորդների և ասպիրանտների ուսուցման հնարավորությունը, որն ապահովում է ակտիվ գիտնականների որակավորումը: Լայն համագործակցային շրջանակ կա ՀՀ տարբեր պետական և մասնավոր ԲՈՒՀ-երի, ՄՈՒՀ-երի և դպրոցների հետ:

#### 4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

2024թ.-ին ծրագրով նախատեսված է շարունակել երկրաբնապահպանական/ՇՄ և էկոլոգիական անվտանգության հիմնահարցերին ուղղված միջգիտակարգային հիմնարար և կիրառական բնույթի հետազոտությունները, որոնք բերված են ստորև՝ ըստ առանձին ուղղությունների և ստորաբաժանումների.

**Շրջակա միջավայրի երկրաքիմիայի բաժին.** Շարունակվելու են հետազոտություններն ուղղված շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների քիմիական կազմի որակական և քանակական ցուցանիշների ուսումնասիրությանը, փոխկապակցվածության բացահայտմանը և պոտենցիալ տոքսիկ տարրերի պարունակություններով պայմանավորված ռիսկերի գնահատմանը: 2024թ.-ին նախատեսվում է շարունակել

- շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչներում քիմիական տարրերի ասոցիացիաների և որոշ ֆիզքիմիական ցուցանիշների փոխկապակցվածության ուսումնասիրությունները:
- ջրային համակարգի վրա քաղաքային միջավայրի ազդեցության գնահատման նպատակով Հրազդան գետի ջրի որակի մոնիթորինգային աշխատանքները՝ մասնավորապես կախության նյութի և հատակային նստվածքների հետազոտությունները:

**Ռադիոէկոլոգիայի բաժին.** ՀՀ տարածքի երկրաբանական կառուցվածքը, աշխարհագրական դիրքը, ատոմակայանի առկայությունը, միջուկային տեխնոլոգիաների ակտիվ զարգա-

ցումը հարևան երկրներում, տարածաշրջանում ընթացող պատերազմական գործողությունները ու այլ գործոններ պայմանավորում են ՀՀ-ում ռադիոէկոլոգիական հետազոտությունների արդիականությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերում բնական և արհեստական ռադիոնուկլիդների ակտիվության մակարդակներն ու տարածաբաշխումը պայմանավորում են դրանց անցումը սննդային շղթաներ ու, հետևաբար, կուտակումը սննդամթերքում: 2024թ-ին նախատեսվում են աշխատանքներ ՀՀ Շիրակի մարզում գյուղատնտեսական հողերում գամմա սպեկտրաչափությամբ ռադիոնուկլիդների նույնականացման և ակտիվության որոշման ուղղությամբ, ինչպես նաև ռադիոնուկլիդային կազմի հիման վրա ռադիոլոգիական ցուցանիշների հաշվարկ և ռադիոնուկլիդների ակտիվության ու ռադիոլոգիական ցուցանիշների մակարդակների բաշխվածության քարտեզների մշակում և ռադիոնուկլիդներով պայմանավորված մարդու առողջական (քաղցկեղածին) ռիսկի գնահատում:

**Կենսաէներգիայի և կերային ռեսուրսների բաժին.** Նախատեսվում է շարունակել բուսածածկի կառուցվածքի փոփոխման հետ կապված բնական խոտհարքներում բարձր կերային արժեք ունեցող հացազգի և բակլազգի տեսակների կերային արժեքների ուսումնասիրությունները, մասնավորապես որոշել տարբեր բուսախմբերի գերակշռությամբ փորձատեղամասերի արդյունավետությունը, բուսածածկի բարձրությունը, տերև/ցողուն հարաբերությունը, օրգանական նյութերի, հում պրոտեինի և թաղանթանյութերի պարունակությունները:

**ԱՏՀ և հեռազննման բաժին** նախատեսվում է շարունակել կլիմայի ժամանակակից փոփոխության պայմաններում լեռնային բնատարածքային համալիրների պահպանմանն ու լանդշաֆտային պլանավորմանն ուղղված գիտահեն որոշումների կայացման նպատակով նախատեսվում է շարունակել նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ լանդշաֆտային կայունության գնահատման գիտամեթոդական հիմունքների և լանդշաֆտների էկոլոգիական մոնիթորինգի հեռազննման համակարգի մշակմանն ուղղված աշխատանքները: Այսպես, 2024թ-ին նախատեսվում է շարունակել կլիմայի փոփոխության պայմաններում

- Լանդշաֆտային բաղադրիչների (հող, ջուր, բույս) էկոլոգիական վիճակի գնահատման հեռազննման մեթոդների կատարելագործման աշխատանքները, մասնավորապես ԱԹՄ ջերմային և բազմասպեկտրալ լուսանկարահանմամբ և սպեկտրոռադիոմետրիկ եղանակով բնական և մարդածին օբյեկտների էկոլոգիական վիճակի հեռազննման հայտանիշների ստացման ուղղությամբ:
- Լանդշաֆտներում հողօգտագործման տարածաժամանակային փոփոխության քարտեզագրման և առանձին հողատեսքերի (*արոտներ, խոտհարքեր, պտղատու այգիներ*) էկոլոգիական վիճակի գնահատման հեռազննման մեթոդների մշակման աշխատանքները:

**Մննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվակերպության կենտրոն** ՀՀ-ն անդամակցում է Եվրասիական տնտեսական միությանն (ԵԱՏՄ) ու Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ), որի համաձայնագրի հիմնարար սկզբունքներից են սննդամթերքի անվտանգության, կյանքի և առողջության բարձր մակարդակի ապահովումը՝ սննդամթերքի անվտանգության ռիսկերի գնահատման գիտահեն գործընթացի միջոցով: 2024 թ-ին պլանավորվող աշխատանքների նպատակն է աջակցել երկրում սննդամթերքի անվտանգության ապահովման ռիսկերի վրա հիմնված համակարգի զարգացմանը, ինչպես նաև բնակչության սնման կարգավիճակի գնահատմանը: Հետևաբար, նախատեսվում է շարունակել բնակչության սննդակարգի ուսումնասիրման, քիմիական վտանգների ներգործությամբ պայմանավորված առողջական ռիսկերի բնութագրման աշխատանքները:

**UNESCO-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոնը**

2024 թ.-ին ամբիոնն իր կրթական, հետազոտական և ինովացիոն գործունեությամբ շարունակելու է աջակցել միջազգային կարևոր գործընթացներին՝ «Կրթություն հանուն կայուն զարգացման»-ը և «Ցկյանս ուսումնառության»-ը, ինչպես նաև նպաստել գիտության ոլորտի 3 (կրթական, հետազոտական և ինովացիոն) բաղադրիչների ինտեգրմանն ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներով: Ամբիոնը կշարունակի հնարավոր համագործակցությունը Էկոկենտրոնի կազմում գործող «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստման գործընթացին՝ ապահովելով համապատասխան տեղեկատվություն և ինտերակտիվ մեթոդներ:

Կազմակերպության  
տնօրեն՝



(ստորագրություն)

( Լ. Սահակյան )  
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

( Լ. Սահակյան )  
(անուն ազգանուն)

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ \***

**«Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ»** ծրագրի  
 (ծրագրի անվանումը)

h/h	անվանումը	Իրականացվելիք միջոցառման	
		համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը
1	<b>Շրջակա միջավայրի երկրաքիմիա</b>	Շրջակա միջավայրի երկրաքիմիական հետազոտություններ՝ ՀՀ տարբեր շրջաններում:	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը
			Կատարման ժամկետները
			Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը
2	<b>Ռադիոէկոլոգիայի բաժին</b>	Շիրակի մարզի գյուղատնտեսական հողերում ռադիոնուկլիդների նույնականացում և ակտիվության որոշում	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը
			Կատարման ժամկետները
			Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը
			Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը
3	<b>Կենսաէներգետիկայի և կերերի որակ</b>	Խոտհարքների անհատական բուսատեսակների ուսումնասիրություն	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը
			Կատարման ժամկետները
			Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը

*Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել էռամսյակային փուլերով:*




			միջև առկա կապի ուսումնասիրություն:	
			Նախորդ հետազոտությունների ամփոփում, համակարգում	II– III եռամսյակներ
			Արդյունքների համակարգչային բազայի ստեղծում, նյութերի նախապատրաստում	IV եռամսյակ
			հաշվետվության և հոդվածների համար	
4	<b>ԱՏՀ և հեռագննման տեխնոլոգիաների բաժին</b>	Նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ լանդշաֆտային կայունության գնահատման գիտամեթոդական հիմունքների և լանդշաֆտների էկոլոգիական մոնիթորինգի հեռագննման համակարգի մշակմանն ուղղված աշխատանքների շարունակում	Լանդշաֆտային բաղադրիչների (հող, ջուր, բույս) էկոլոգիական վիճակի գնահատման հեռագննման մեթոդների կատարելագործման աշխատանքներ, մասնավորապես ԱԹՍ ջերմային և բազմաապեկտրալ լուսանկարահանմամբ և սպեկտրոռադիոմետրիկ եղանակով բնական և մարդածին օբյեկտների էկոլոգիական վիճակի հեռագննման հայտանիշների ստացման ուղղությամբ:	I–II եռամսյակներ
			Լանդշաֆտներում հողօգտագործման տարածաժամանակային փոփոխության քարտեզագրման և առանձին հողատեսքերի (արոտներ, խոտհարքեր, պտղատու այգիներ) էկոլոգիական վիճակի գնահատման հեռագննման մեթոդների կատարելագործում:	III– IV եռամսյակներ
5	<b>Սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոն</b>	Սննդակարգի ուսումնասիրում. սննդանյութերի ընդունման գնահատում	Բնակչության տարբեր խմբերի համար սննդանյութերի ընդունման գնահատում	I եռամսյակ
		Սննդամթերքում քիմիական վտանգների ներգործության գնահատում և ներգործությամբ պայմանավորված առողջական ռիսկերի բնութագրում	Շարունակվելու են սննդամթերքի սպառման և քիմիական վտանգների պարունակության տվյալների համադրմամբ ռիսկի գնահատման աշխատանքները	II եռամսյակ
		Աշխատանքների ամփոփում	Քիմիական վտանգներով պայմանավորված առողջական ռիսկերի բնութագրում	III եռամսյակ
				IV եռամսյակ
6	<b>UNESCO-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոն</b>	«Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության շրջանակներում մագիստրոսական կրթության աջակցություն	Կայուն զարգացման բնապահպանական առանցքային թեմաների շրջանակներում սեմինար-վարժանքների կազմակերպում	I եռամսյակ
		UNESCO-ի բազային և գործընկեր դպրոցներում	«Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի և	II եռամսյակ

	կայուն զարգացման առանցքային թեմաներով էկոլոգիական դասընթաց-սեմինարների իրականացում	Էկոլոկենտրոնի տարբեր բաժինների հետ համատեղ գիտակրթական ծրագրերի և միջոցառումների իրականացում, մասնակցություն հետազոտական փորձերին	
	Կրթություն հանուն կայուն զարգացման, «ցկյանս» ուսումնառության շրջանակներում գիտակրթական հետազոտությունների իրականացում	«Յկյանս ուսումնառության» մոդելի փորձարկում ՅՈՒՆԵՍԿՕ-ի բազային դպրոցներում, նոր նախագծերի մշակում և իրականացում	III եռամսյակ
	Տեղական և միջազգային համագործակցության ընդլայնում, բնապահպանական գիտակրթական ծրագրերի բազաների պարբերաբար լրամշակում	Տեղական և միջազգային կազմակերպությունների հետ կապերի ընդլայնում, տեղեկատվության փոխանակում UNITWIN Networks, Info CENN, EENCE, ԲԿՑ և այլ ցանցերում	IV եռամսյակ

Կազմակերպության տնօրեն՝

  
 (ստորագրություն) \_\_\_\_\_ )  
 (անուն ազգանուն)  
 L. Սահակյան

Ծրագրի գիտական ղեկավար՝

  
 (ստորագրություն) \_\_\_\_\_ )  
 (անուն ազգանուն)  
 L. Սահակյան